

ՄԵՐԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէրց).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Մի քանի խօսք մի յօդուածի առիթով. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եղիպտական խնդիրը. Նամակ Երևանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆրանսիական ցուցահանդէսը Մոսկուայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Վերջապէս, երկար ընդհատումից յետոյ, հինգ-շաբթի, սեպտեմբերի 5-ին, սկսվեցան կանոնաւոր կերպով կազմակերպւած հայոց դրամատիական խմբի ներկայացումները։ Առաջիկայ սեզոնը մեծ դեր պէտք է խաղայ հայոց թատրոնի ապագայ զոյուղեան մէջ։ Եթէ նա անցնի անողակ, միջոց կը լինի հետեւեալ տարիներն էլ շարունակել գործը, բայց եթէ հասարակութիւնը վերաբերվցն անտարբեր, այն ժամանակ վայն եկել տարել է. այս ամառ հազար դժուարութիւններով ժողոված դուամբը հազիւ բաւական կը լինի մի տարվայ ֆինանսերը ծածկելու, իսկ այնուհետև նորից կը մնանք առանց թատրոնի։ Թատրոնի ղեկավարները վրա մեծ պատասխանատւութիւն կայ. նրանք պէտք է օգտվեն հասարակութեան ներկայ ոգևորութիւնից և աշխատեն որքան կարելի է վառ պահել այդ ոգևորութիւնը։ Ի հարկէ, ազգասիրաբար չէ կարելի ստիպել մարդու չաքաքը երկու անգամ թատրոն գնալ. նա գնում է այնտեղ բաւականութիւն և դուարձութիւն ստանալու համար։ Եւ հազիւ թէ թատրոն յաճա-

խողը ստացած լինի այդ բաւականութիւնը հինգ-շաբթի օրվայ ներկայացումից։ Նախ թատրոնի բացման համար ընտրած դրաման պէտք է համարել շատ անաջող։ «Կատերին Հովարդ» Գիւլմայի թող դրամաներիցն է, մեղօքրամական ամենասոսկայի և զարհուրեցնող ձևերով։ Բաւական է ասել, որ գլխաւոր հերոսները երկու անգամ մեղում են և յարութիւն առնում։ Տիկին Սիրանոյ, որին պարտական ենք Հովարդը արխիւներ թողելի միջոց հանելուն, մեծ սխալ մտնը է արել իր գերիւտը այդ պիէսայով սկսելով։ Կատերինի դերը զրկւած է ուժեղ դրամատիական գերասանունների համար. մինչդեռ տիկնոջ բեմական միջոցները թող չեն տալիս նրան խիստ դրամատիական դերերում տպաւորութիւն գործել։ Որքան յիշում ենք, տաս տարի առաջ տ. Սիրանոյ թիֆլիսում խաղում էր էն ժէնիւ դրամատիկ և մասամբ կօմիկ դերերը։ Այնուհետև Կ. Պոլսում տիկինը մասնակցում էր տաճկական ներկայացումներին և օպերետներին, ուրեմն մի քիչ անհասկանալի է նրա խողի ժանրի այժմեան փոփոխութիւնը։ Գալով Թիֆլիս տաղանդին, մենք կը ցանկանայինք նրան տեսնել իր ոյժերին համեմատ դերերում։ Միւս դերասանները ընդհանրապէս անուր էին այն, ինչ որ կարող են։ Լաւ տպաւորութիւն թողցն պ. Աբելեան, որը այս քանի տարվայ միջոցում, ինչպէս երևում է, մշակել է իրան. նա այժմ ունի շատ գեղեցիկ զինքի, ղէմքի արտայայտիչ միմիկա և զգայուն խաղ. միայն նրան թշնամի են իր ձեռքերը և մանաւանդ մատները, որոնց խիստ դրամատիական տեղերում չը գիտէ շարժել։

«Կատերին Հովարդ», ինչպէս երևում է, թարգմանված է թիւրքահայոց բարբառով և լսել այդ բարբառի դարձածները մեր արտասանութեամբ

շատ անգամ ծիծաղ է յարուցանում, այդ պատճառով աւելորդ չէր լինի այդպիսի թարգմանութիւնների մէջ տեղական դերասանների դերերի լեզուն մշակել։

Թատրոնը, բացի օթեակներէրց, գրեթէ լի էր և հասարակութիւնը տ. Սիրանոյին և պ. պ. Պետրոսեանին ու Աբելեանին բաւական ծափահարում էր։ Տիկինը ստացաւ ծաղիկայ փունջ և քնար, իսկ պ. Պետրոսեան—պսակ։

Գալ հինգշաբթի, սեպտեմբերի 12-ին, ինչպէս խմբանք թատրոնի պատերին կայքրած ուսուցիչն յայտարարութիւններից, կը լինի պ. Գուրեանի դերերը, բայց թէ ինչ դերում՝ այդ մասին ոչինչ յայտնի չէ։

ՄԻ ԲԱՆԻ ԽՕՍԳ ՄԻ ՅՈՂՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակ» լրագրի 94 համարում տպւած է մի յօդուած «Մեր ուսուցչական խմբերը» վերնագրով և ** ստորագրութեամբ։ Յօդուածը գրված է ընդհանուր ձևով, այնպէս որ խմբագրութիւնը և ընթերցողները մեծամասնութիւնը, ի հարկէ, չէին կարող հասկանալ, թէ այդ յօդուածը ամբողջապէս կազմված է զանազան ակնարկութիւններից որոշեալ անձնաւորութիւնների վերաբերմամբ։ Բայց այն քաղաքի ընկերները, որտեղ ապրում է յօդուածագիրը, բոլորն էլ կարդալով այդ յօդուածը, անկասկած կը հասկանան, թէ ում են վերաբերվում այդ ակնարկութիւնները և հէնց այդ է պէտք յօդուածագիրին. նա կը վերցնի «Մշակի» այդ համարը, կը տանի իր քաւոր չարչի Մարկոսի կամ Կիրակոսի խանութը, կը ժողովի զըլ-լին մի քանի միամիտ մարդիկ և կը կարգայ յօդուածը, ուրախութիւնից չփելով ձեռքերը։ Գա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԵՐԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Ե պաւիլոնի մի մասը բռնում է «Պարիզ քաղաք» կոչվող բաժանմունքը։ Այդտեղ ցուցահանդէս այցելողը կարող է ծանօթանալ համաշխարհային մայրաքաղաքի ներքին կեանքի հետ։ Բազմաթիւ մօդէլներ, նկարներ, քարտեզներ, վիճակագրական պատկերազարդ հաւաքածուներ, աղիւսակներ, կարտօգրամմաներ, դիագրամմաներ և այլն հանդէս են գրված իբրեւ լուս., բայց վերին ստիճանի ճարտարաբան փաներ այն կարգի ու կանոնի, այն բարեկարգութեան, որ սիրում է այդ մօտ 21/2 միլիոն բնակիչ ունեցող քաղաքում։ Ափսոս որ այդ բոլորը համարեա բոլորովին անօգուտ է անցնում ցուցահանդէսն այցելողների մեծամասնութեան համար, որովհետեւ այդ զօլու-մնանքի մօտ չը կան անհրաժեշտ բացատրութիւններ, իսկ եղած լակոնական վերնագիրներն էլ զրկւած են շատ շատերի համար անհասկանալի ֆրանսերէն լեզուով։

Եթէ այդ հանգամանքը չը լինէր, այդ բաժանմունքը ցուցահանդէսի ամենադաստիարակիչ մասը կը լինէր։ Բայց չը նայելով դրան, էլի շատերը գլխում եղրակացութիւններով բեղմնաւոր խորհրդածութիւններ կը զարթեցնի «Պարիզ քաղաքը»։

Պարիզը բոլորովին բացառական տեղ է բնութեւում բոլոր մայրաքաղաքների մէջ։ Ոչ մի մայրաքաղաք այնքան կատարեալ և, եթէ կարելի է այսպէս ասել, լիազօր ներկայացուցիչ չէ կարող համարվել իր տէրութեան և ազգի համար ինչպէս Պարիզը։

Ամբողջ Ֆրանսիան կենտրոնանում, ամփոփվում ու ցրւում է այդ հրաշալի քաղաքի մէջ այնպէս, ինչպէս լոյսի ցրված ճառագայթները կիզիւ ապակու ֆօկուսի մէջ։ Ոչ մի տեղ քաղա-

քական ու մասուր—բարոյական կեանքի կենտրոնացումը չէ հասցրած այն աստիճանին, ինչպէս Ֆրանսիայում։ Վերջին հարիւրամեակի բոլոր քաղաքական փոփոխութիւններն ու աշխարհային պատերազմի մէջ կենտրոնացման սկզբունքը ապաւած ժայռի պէս անյողողող է մնացել։ Շատ միապետութիւններ մէջ վարչական կազմակերպութիւնը այնպիսի խիստ կենտրոնականութեան վրա չէ հիմնված, ինչպէս Ֆրանսիական հասարակագիտութեան մէջ։ Հնութիւնից մնացած այդ սկզբունքը Ֆրանսիայի կազմուածքի Աբիլլէսեան կէտն է, որից շատ լաւ օգուտ են կարողացել քաղել Նապոլեոնները։ Հիշէ, է, Բեռլինն ասում է, թէ Պարիզը Ֆրանսիայի գլուխը չէ, այլ գլխարկը, որ նա (Ֆրանսիան) կը վերցնի երբ որ չըբի, բայց այդ աւելի սրամիտ է քան ճշմարիտ և Պարիզից զրկված Ֆրանսիան աւելի գլխատված դիակի կը նմանի, քան գլխաքաց մարդու։

Հասկանալի է թէ ինչ նշանակութիւն ունի Պարիզը բաժանմունքը Ֆրանսիական ցուցահանդէսում։ Մի քանի տախտակապատ փոքրիկ սենակներ պէտք է գաղափար տան այցելուներին լայնածաւալ, բազմամարդ, կենսակից մայրաքաղաքի բնորոշ երևոյթների մասին։

Գուց մտնում էք այդ բաժանմունքը վերին աստիճանի սաստկութեան հասած հետաքրքրութեամբ, հարեանցի հայեացք էք դնում ձեր չորս կողմը և սկզբում հիասթափվում էք։ Բայց երբ որ սկսում էք ուշադրութեամբ դիտել, երբ որ ձեր առաջ բացվում է այդ նկարների ու քարտեզների մէջ ծածկված խոր իմաստը, ձեզ տիրում է մի տարօրինակ զգացումը.—Ֆրանսիայի հանճարը կարծես յանկարծ չըբաւարանում է ձեզ, ողորում է ձեզ լոյսի ու ջերմութեան ալիքներով, երբեմն շարժելով ձեզ իր պայծառ փայլով, երբեմն փայփայելով իր մեղմ ճառագայթներով։

Որքան հմուտ լինի, որքան խոր ու բազմակողմանի ուսումնասիրութիւն, որքան ձիրք ու ընդունակութիւն, վերջապէս որքան բարեխիղճ հոգատարութիւն ու աշխատանք է հարկաւոր եղել

Պարիզը բարեկարգութեան, մաքրութեան ու հասարակական հիմնարկութիւնների կողմից այդ աստիճան կատարելութեան հասցնելու համար։ Եւ որ աւելի զարմանալին է, Պարիզը այժմեան ծաղկած դրութիւնից քսան տարի առաջ ենթարկվել է գերմանացիների երկարատեւ պաշարման, աւերիչ ուժակոծութեան և զարհուրելի սովի, որի ժամանակ միլիոն անգամ ձիւ միտն ու ցամաք հացը չալյովիւն էին համարվում։ Եւ չէր միշտ արտաքին արշաւանքին յաջորդող ներքին կռիւր։

Հիշէ են ասում քաղաքատնտեսները, որ ազգերի հարստութիւնը կազմվում է ոչ թէ խնայողութեամբ, այլ արդիւնաւէտ աշխատանքով։ Եթե հասուն մէկ թէին քարտեզանդ եղաւ, աւերակ դարձաւ Պարիզը, բայց ժողովրդի աշխատասիրութիւնն ու կուլտուրականութիւնը չոչնչացան և, հէնց որ տիրեց խաղաղութիւնը, Պարիզը աւերակների ու մոլորի միջոց նորից բարձրացաւ աւելի մաքուր, աւելի գեղեցիկ քան առաջ։

«Պարիզ քաղաքը» բաժանմունքը ուսումնասիրելիս ես ակամայ սկսում էի համեմատել մեր քաղաքները Պարիզի հետ։ Այդ համեմատութիւնը բարդվում էր ուրիշ շատ համեմատութիւններով, անթիւ հարցեր զարթեցնելով իմ մէջ։ Ինչու մեզ նման այնպէս չէ ինչպէս այնտեղ։ Ինչու մեզ ու արևմտեան եւրոպացիների գլխաւոր տարբերութիւնը։ Ի՞նչ է մեզ պակասում։ Միթէ խելք, ընդունակութիւն, ձիրք, աշխատասիրութիւն։

Վճռել այդ հարցը շատ դժուար է, բայց որոշեալ աստիճանի բաւարար բացատրութիւն գտնել, որ մասամբ լուսաբանում է հարցը,—կարելի է։

Կարելի է կարծել, որ ասիացու ամենաշակաւ յատկութիւններից մէկն է կրաւորական վերաբերութիւնը զէպի շրջապատող հանգամանքները, որ բացատրվում է մարդկային անձնաւորութեան պակաս դարգացմամբ։ Արեւմտեան եւրոպայում արտաքին պայմանները ծաւայում են մարդու պահանջներին, իսկ մեզանում կարծես մարդս

ւառական քաղաքում ամեն մի ասէկոսէի՝ իբրեւ երկնքից իջող մանանայի՝ սպասող շատերը կան, —այդպիսիներին հօ կանչել էլ պէտք չէ, իրանք կը դան լսելու։ Եւ ահա յօդուածագիրը հասել է իր նպատակին, վատաբանել ու զրպարտել է մի քանի պատաւոր մարդկանց, որոնք հերքել նրա գրածները չեն կարող, քանի որ նա նրանց անուր չէ տուել և նեղն ընկած ժամանակ միշտ կարող է ուրանալ թէ նրանց է աչքի առաջ ունեցել։

Այդ վերջին հանգամանքը մի կողմից, միւս կողմից էլ զրականութեան պատիւը, որ ընկնում է այդպիսի յօդուածների շնորհիւ, ինձ ստիպում են իբրեւ այնպիսի կողմնակի մարդու, որը ծանօթ է գործի, ինչպէս ուսանելն ասում են, ЗАЧЕМЪ ИМЪ կողմի հետ, մի քանի տողով պաշտպանել զրպարտվածների պատիւը և յիշեցնել յօդուածագիրն, որ «СЪ СЛОВОМЪ НАДО ОБРАЩАТЬСЯ ЧЕСТНО», ինչպէս ասում է մի երեկի գրող։

Չեմ ուզում այստեղ երկար ու բարակ խօսել յօդուածագրի կեղտոտ ակնարկութիւնների մասին, որոնք վերաբերվում են հասարակական գործունէութեան նուիրված, նոր գաղափարներով ոգևորվող և, յամենայն դէպս, համակրելի զգացմունքներ տէր երիտասարդներին մի խմբի, որին յօդուածագիրը սիրում է «Թայֆա» անուանել։ Այսքանս կասեմ, որ յօդուածագիրը գրեզված է այդ խմբի դէմ անձնական հայեանքի պատճառով, որ ես պատրաստ եմ ապացուցանել, երբ որ նա այդ պահանջին Գրանով ես չեմ ուզում ասել, որ այդ երիտասարդները ոչինչ պակասութիւններ չունեն կամ ոչ մի սխալ չեն գործել, բայց այդ ոչ ոքի իրաւունք չէ տալիս դժնատակից նրանց վրա «փող կորզելու» մեղադրանք չարտել։

ստեղծված լինի իրան չըբաւարանող պայմանների համար։

Յայտնի է, որ Բոլորիւն կուում յաղթող են հանդիսանում արտաքին պայմաններին ամենալաւ յարմարված կազմուածները (օրգանիզմներ)։ Բայց այդ յարմարվելը երկու տեսակ է լինում,—կենդանիներից մի քանի տեսակները յաղթող են հանդիսանում իրանց ոյժով, ճարպիկութեամբ, սրտեստութեամբ և այլն, մինչդեռ ուրիշ տեսակները շարունակում են իրանց գոյութիւնը չնորհիւ այն յատկութեան, որ բացմանում են անթիւ քանակութեամբ։ Առաջինները, այսպէս ասած, ներդրածական կերպով են յարմարվում հանգամանքներին,—կոււի մէջ յաղթող հանդիսանալու համար նրանց ունեցած միջոցները հետգհետ կատարելագործվում, զարմանում են, ժանիքները աւելի սրանում են, ուսնելի արագութիւնը աւելանում է, աչքերի հեռատեսութիւնն ու սրտեստութիւնը զորանում է, ուղեղը զարգանում է։ Վերջինները կրաւորական կերպով են յարմարվում հանգամանքներին,—նրանց կոտորում են, նրանք դիմադրելու ընդունակ չեն, զոհ են դառնում կոտորածի, բայց նրանց քօքը չէ կտրվում բոլորովին, որովհետեւ, եթէ հաղաբից մէկը կենդանի է մնում, աշխարհ է բերում իր նըման բիւրաւոր արարածներ։ Բեղմնաւորութիւնը, որ բաւական զօրեղ, բայց կրաւորական զէնք է գոյութեան կուում, բնորոշ է ստոր կազմուածքների համար և առհասարակ մի որ և է կազմուածք որքան բարձր աստիճանի վրա է զըսնվում կենդանաբանական սանդղդի մէջ, այնքան աւելի զարգացած ներդրականութիւն ունի։

Քաղաքակրթութեան աստիճանի բարձրանալով էլ ներդրականութիւնը զօրանում է մարդկանց մէջ։ Մարդու յաղթանակները բնութեան վրա կազմում են քաղաքակրթութեան յառաջագիմական գնացքը։ Մինչդեռ անքաղաքակրթ մարդը յարմարվում է արտաքին բնութեանը, քաղաքակրթվածը բնութիւնը ծառայեցնում է իր

Աւելցնեմ եւ այն, որ այդ երկտասարկները բոլորն էլ անհիշողութեամբ են «Մշակի» պաշտպանած գաղափարները և յօդուածագրի վերջին յօդուածին տեղիք են տուել հէնց նրանով, որ նրանք պաշտպան են հանդիսացել ժողովրդից ընտրված հոգաբարձուները իրաւունքները Պարզ է, որ «Մշակի» խմբագրութիւնը, եթէ իմանար որ հարցը դրանուան է, արդար կը համարէր այդ երկտասարկներին և ոչ այն մարդկանց, որոնք կարծում են թէ աւագ-ուսուցչի ամենամեծ արժանաւորութիւնը ձեռն մէջը ունենալը պէտք է համարվի: «Մշակի» խմբագրութիւնը չէր պաշտպանի նոյնպէս հայերէնի այն ուսուցչին, որը գրում է «Թուրքերի», «մինչ, և» ու տողադարձութիւն է անում «Միլիթարեան-ին» և այլն և «Թեքուս, անիւրձ, գոռոզ, կոկորդիլո» տիրա-ցուական մակդիրներ չէր տալ այն երկտասարկ-ներին, որոնք հայերէնի ուսուցչից հայերէն իմա-նալ և «Մշակի» թղթակցից «Մշակի» գաղափար-ները կենսել մէջ պաշտպանել են պահանջում:

Չէ, լաւ չէ, պարոն **, ի չարը գործ ածել խմբագրութեան վստահութիւնը և ընդհանուր դատողութիւնները դիմադրել վստահութեան այն բանը, որին միայն համակրութեամբ կարող է վե-րաբերվել «Մշակ» լրագիրը:

Բայց այդ դեռ ոչ չէ. իմ կարծիքով ամենա-վատն այն է, որ յօդուածագիրն իր հակառակորդ-ներին վստահութեամբ համար ընտրում է մի այն-պիսի միջոց, որը ամեն մի ազնիւ գրող պէտք է իր պատուից ստոր համարի: Խօսքս պատկերի մասին է:

Եթէ մասնաւոր կենսելում անազնութիւն է համարվում վստահութեամբ մէկին, ինչպէս ասում են, դոնտառիկը. եթէ կենսական մօրախ անգամ պահանջում է, որ մարդ մէկի վրա յարձակվելիս նրան յիշի յականէ յանուանէ, որպէս զի նա մի-ջոց ունենայ պաշտպանել իրան. եթէ բաւա-րաստէրները մինչև անգամ անդադրեցան հասա-րակութիւնը արհամարհանելով է վերաբերվում, որքան ևս աւելի հակակրելի բան պէտք է հա-մարվի վրէժնորդութեան այդ կեղտոտ ձեռ-քականութեան մէջ մտնելը: Գրականութիւնը սուրբ կոչումն ունի դատարարակեղծ հասարա-կութեան միտքն ու սրտը և յով որ կեղտոտ ձեռներով է մօտենում նրան՝ սրբապղծութիւն է անում: Այդ է պատճառը, որ կրթված և գրա-

կանութեան գիրը հասկացող հասարակութեան մէջ կարգին մարդիկ ստորութիւն են համարում իրանց համար գործ ունենալ պատկերանշանի հետ:

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թէ որքան անփոյթ են հոգևորականներն ի-րանց անմիջական պարտականութիւնները կատա-րելու գործում, երևում է հետեւեալ փաստից: «Орловск. Вѣстникъ» լրագիրը հազորդում է հաստատ աղբիւրներից, որ Օրլովի մի քահանայ «մոռացել» է արձանագրել 18 պատկազրութիւն-ներ: Վերոյիշեալ լրագիրը հաւատացնում է, որ այդպիսի դանցառութիւնները սովորական բաներ են. և որպէս զի պարզ գաղափար կարողանանք կազմել չարձանագրված պատկերի և միտքութիւն-ների մասին, կասենք, ասում է լրագիրը, որ Օրլո-վեան կոնսիստորիայում տարեկան 1000 գործերից աւելի է լինում այդպիսի դանցառութիւնների վերա-բերմամբ: Հարկաւոր է լինում, որինակ, դեղագուցն պատկեր իր որդուն կամ մարդու տալ իր աղջկան. անհրաժեշտ է մէտրիկական վկայական, որի հա-մար դիմում է, ուր հարկն է. բայց նրա խնդիր-քը մերժում են այն հիման վրա, որ արձանա-գրութեան համաձայն, նա չը պէտք է ունենայ արու զաւակ կամ աղջկա: Բնական է, որ գիւ-ղացին պէտք է աշխատէ կոնսիստորիայի գրե-քներում արձանագրել տալ իր որդիկանց անուն-ները: Սկսվում է գրագրութիւն, զննութիւն է կատարվում: Եւ ինչ զիւրացնելը ստիպված են լինում շատ անգամ իրանց վերջին կօպէլը ծախ-սել իրանց ցանկացած թղթերը ստանալու հա-մար: Նոյն երեւոյթը համարեա կրկնվում է և մեզ, հայերիս մօտ: Գրան ապացոյց կարող են լինել կովկասում գիւղաբնակչութիւնը սկսվելուց յետոյ մասնաւոր մեր կոնսիստորիաներում դիվիզի-ոնները, որոնցից երևում է թէ մեր քահանանե-րը իրանց տղիւտութեան պատճառով, որքան փոքր նշանակութիւն են տալիս այդ արձանա-գրութիւններին: Բերենք մի օրինակ: Ն. ծնող-ներից ծնվում է մի արու զաւակ, որին միտե-լով Պետրոս անունն են դնում: Քահանան երկի լաւ տրամադրված է լինում և արձանագրում է մատենում նրա անունը: Այդ զաւակը 6 ամսից

յետոյ մեռնում է: Երեք տարուց յետոյ նոյն ծնող-ներից ծնվում է նոյնպէս մի արու զաւակ, որին միտեւում, նոյնպէս Պետրոս անունն են դնում: Այս անգամ քահանան մոռանում է նրա անունն արձանագրել մատենում: Անցնում են տարիներ, և անհրաժեշտ հրամանով սկսվում է մեզ մօտ գիւղաբնակչութիւնը: Մի գեղեցիկ օր, գիւղաբ-նակչութեան առեւտն են հրաւիրում 17 ամսայ Պետրոսին և յայտնում են նրան, որ նա ենթա-կալ է գիւղաբնակչութեան, որովհետեւ նրա 21 տարին արդէն լրացնում է: Պետրոսը սկսում է հա-ւատացնել թէ ինքն 17 տարեկան է միայն, և իր խօսքերն ապացուցանելու համար շտապում է կոնսիստոր, մէտրիկական վկայական դուրս բե-րելու: Բայց որքան է լինում նրա զարմանքը և յուսահատութիւնը, երբ մատեններից յայտն-վում է, որ նա ոչ թէ 17 տարեկան, այլ 21 տարեկան է եղել... Քահանայի այդ սխալը այն-պիսիներից էր, որն ուղղել ոչ մի միջոցով չէր կարելի, ուրեմն խեղճ 17 տարեկան Պետրոսը ստիպված է լինում իր մատաղ հասակում դե-նուորի ծանր լուծը կրել...

ԲԱՅՈՒՄԻ հայ թատրոնաւորները մեզ հեռա-գիր ուղարկեցին, որով շնորհաւորում են թիֆ-լիսի հայոց թատրոնի բացումը, ցանկանալով հա-յոց թատրոնական գործին յարատւութիւն և ա-ջողութիւն:

ԳԱՋԱԽԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառում անընդհատաբար լինում են աւաղակութիւններ: Վերջին ժամանակները թուրքերից խմբեր են կազմվել և որպէս զի սարերում եղած թուրքերը աւաղակներին չը կերակրեն, պ. գաւառապետը հրամայեց բոլոր թուրքերին քոչել դէպի իրանց մշտական բնակարանները»:

Մենք լսում ենք, որ մեր հայ երկտասարկ եր-գիչ, պ. Ս. Նիկողայարեան, տալու է իր կոնցերտը ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում սեպտեմբերի 21-ին: Նախ պարոնն իր ընկեր պ. Աֆրիկեանի հետ կերթայ Բազու, ապա՛հիւ կօնցերտ տալու Նիկողայարեանի կօնցերտին:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Մօտենում է ուս-

ման տարեկանը, իսկ հայոց երկրաստան ու-սումնարանի հոգաբարձութիւնը ոչ հայոց և ոչ ուսուցիչ լեզուի վարժապետ է վարձել, ոչ էլ նոր բնակարան է պատրաստել ուսումնարանի համար: Ուսումնարանի չէնքը շատ անյարմար է ամեն կողմից: Նոր չէնք վարձելու արդեւաւորեմ այն անհամաձայնութիւնն է, որը ծագել է հոգաբար-ձուների և տանուտէրի մէջ. տանուտէրը պահան-ջում է տարեկան 150 ռուբլի այդ տան վարձի համար, իսկ հոգաբարձութիւնը առաջարկում է 130 ռուբլի: Ուրեմն զանազանութիւնը 20 ռուբ-լու մէջ է: Արեւ. միթէ, դրա մասին երկար մը տաճել, երբ ուսումնարանի շահերն են վնաս-վում»:

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են, որ վարակիչ հիւան-դութիւնները Զանգեզուրում նորից սկսել են տարածվել: Մի քանի գիւղերում բաւական թույլ մասնակներ զոհ են գնում այդ հիւանդութիւննե-րին: Թղթակցից հաղորդում է որ այս տարի թէ ցորենը և թէ ուրիշ բերքերը բաւական առատ են գաւառում: Տաք օրերից յետոյ անձրև եկաւ, որը և նպաստեց արտերի վարելուն:

ԿԱՐՍԻ վարժուհի օրիորդ Վառվառէ Մնացա-կանեանց խնդրում է մեզ՝ տպագրել հետեւեալը. «Զեք լրագրի 98-որդ համարում տպված էր, որ կարսի ուսումնարանի ուսուցչական խումբը արձակված է, բայց այդտեղ ձեռ լրատուն սխալ-վում է, քանի որ ամբողջ խումբը արձակված չէր, այլ խմբի մէջ կային հրաժարական տուող-ներն էլ, որոնց թւում է ևս, որովհետեւ ես ինքս իմ կամքով պաշտօնապէս հրաժարական եմ ներկայացրել աւագ-ուսուցչի պ. Գիւանեանցին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԻՆՎԻԴԸ

Սոյսերի օրգան «Standard» լրագիրը, խօսելով թիւրքաց առվթանի այժմեան տրամադրութեան մասին Նիկողայարեանի վերաբերմամբ, տրամադրո-թիւն, որը շատ էլ նպաստաւոր չէ Անգլիայի ասում է, որ ինքն սովորածը, ինչպէս երևում է Ֆրանսիայից ներշնչված, մերժում է վաւերացնե-

պահանջներին իր դարձագած խնդրով և իր ձեռ-քի աշխատանքով: Այդպէս է և բոլոր այն ար-տաքին պայմանների վերաբերմամբ, որոնց աղ-բիւրը հասարակական կենսկցութիւնն է: Ասիա-ցին իր հոտառութիւնը յարմարեցնում է փողոց-ների ու հրապարակի դարձահոտութեանը, իսկ եւ-րօպայցին, ընդհակառակն փողոցներն ու հրապա-րակներն է յարմարեցնում իր մաքրասիրութեա-նը, — և այդպէս ամեն բանում:

Եւրօպայում հիւանդանոց հիմնելիս աչքի ա-ռաջ ունեն հիւանդներին, ուսումնարան հիմնե-լիս մտածում են աշակերտներին մասին, տուն շի-նելիս — ապագայ անաւորների մասին, երկաթու-ղի անցկացնելիս ամեն բան յարմարեցնում են ձանապարհորդների և ապրանքատրեքերի շահերին և այլն: Մի խօսքով Եւրօպայում մարդս մտա-ծողութեան, հոգատարութեան աւարկայ է, նա երբեք մոռացութեան չէ տրվում. նա է ամեն բանի կենտրոնը ու վերջնական նպատակը:

Այդ է եւրօպականութեան ամենաբնորոշ կողմը, և ընդհակառակը մարդկային անձնաւոր-ութեան կատարելագոյն արհամարհված լինելն է ասիականութեան ամենից աչքի ընկնող առանձնա-յատկութիւնը: Հեռու չը գնանք, Ասիայում մինչ-չև անցելով դռներն այնպէս են շինվում, որ մարդ մէջներովը անցնելիս պէտք է երեք տակ ծալվի:

Անցնենք այժմ Պարսիկի բարեկարգութեան նը-կարագրութեանը, որի համար ևս կօգտվեմ «Русскія Вѣдомости» լրագրի մէջ Մօսկվայի ցու-ցահանգէսի առկիւով տպված մի շարք յօդուած-ներից, որոնք «Очерки городского благоустрой-ства въ Парижѣ» վերնագիրն են կրում և ստո-րագրված են В. Ф. սկզբնատառերով: Տեղ տեղ եւ այդ յօդուածներից ամբողջ ցիտատներ կը բե-րեն:

Խօսենք առաջ Պարսիկ քաղաքի ջրամատակա-րարութեան մասին, որ այժմ, երբ թիֆլիսիցը ու շուշեցիցը աւետարանի մեծատան պէս պապական-ն են ծարաւութիւնից, աւելի ևս կարող է հե-տաքրքրական լինել մեզ համար: Տեսնենք ար-դեօք Պարսիկի մոռնիցիկալիտեան էլ թիֆլիսի

քաղաքային վարչութեան նման աշխատում է դարձագրել բնակիչների մէջ ժողովարարութիւն և արհամարհանք դէպի աշխարհային անցաւոր բա-րիքները, ինչպէս է, օրինակ, բաւական քանակու-թեամբ խմելու ջուր ունենալը: Տեսնենք արդեօք Պարսիկում հասել են բարոյական զարգացման այն աստիճանին, որ հասկանան, թէ «ոչ միայն ջրով կեցցէ մարդ, այլ և ջրաւից ճարտարախօսութեամբ քաղաքային ձայնաւորաց»:

Չէ, Պարսիկի այդ նոր Բաբելոնի բնակիչները այդտեղ էլ փայլում են իրանց անբարոյականու-թեամբ: Մոռնիցիկալիտեամբ ոչ միայն չէ կատա-րում իր բարոյական դատարարակիչ դերը, այլ և կարծէք աշխատում է անժողովարարութիւն դար-գանքի ժողովրդի մէջ:

Նա ինչ է գրում «Русскія Вѣдомости» լրա-գրի վերոյիշեալ յօդուածագիրը:

Պէտք է տեսնել թէ ինչ հմտութեամբ, ինչ եւ-ռանդով և ինչ աստիճանի ուշադրութեամբ դէ-պի բնակիչների կարիքները Պարսիկի մոռնիսի-պալ խորհուրդը հող է տանում իր քաղաքային տնտեսաւարարութեան այդ կարեւորագոյն ձեւի վրա: Օգտվելով գիտութիւնից և տեխնիկայից, նա օրից օր աւելի ու աւելի ընդարձակում ու բարենորոգում է ջրանցքների ցանցը, մի և նոյն ժամանակ չը խնայելով աշխատանք ու փող ջրամատակարարութեան նոր աղբիւրներ գտնե-լու և ջրանցքային ահագին ու բարդ շէնքեր կա-ռուցանելու համար:

«... Նա (ջրանցքներից մէկը) տեղ-տեղ նմա-նում է փռահեղ ստորերկրեայ գետի, որ հան-դարտ հոսելով թափում է իր վճիտ ջրերը Պա-րսիկի մօտ ընդարձակ դաշտում գտնվող աւազանի մէջ: Այդ ջրամբարը ինժեներական արուեստի հրաշակերտ է: Նրա մակերևոյթը հաւասար է 20 հազար քառակուսի մէտրի և նա կարող է տա-նել մինչև 100 հազար խորանարդ մէտր ջուր: Որպէս զի կարելի լինի մաքրել նրա մէջ դիվիզի-տիվը, նա բաժանված է մի պատով երկու մա-սի, որոնք կազմում են երկու առանձին աւա-դաններ: Եթէ աւազանի ջրի մակերևոյթից բարձր

բարէ շէնքի մէջ գտնվող սանդուղքով իջնէք կը տեսնէք, որ այդ աւազանի տակ մի ուրիշ ջրամ-բար էլ կայ, որ լցվում է Մարսի ջրերով Saint Maurice-ում գտնվող մեքենաների միջոցով: Այդ եր-կու իրար վրա դրնվող շէնքը բաժանվում են ի-րարից անխախտելի դրանիւթ թաղով, որ ներ-քեւում յնվում է կամարների ու սիւնների վրա...»

«Ջրանցքների բերած ջուրը լցվում է քաղա-քային ջրամբարների մէջ, ուր նա մնալով պարզ-վում է և յետոյ չուգունէ խողովակներով գնում է բաժանորդների (աբոնենտ) տները և քաղաքա-յին շատրուանները, որոնք ֆիլտրներ ունեն: Այդ շատրուաններից մի քանիսից բնակիչնե-րը ձրի օգտվում են, մի քանիսը ձիր ջրե-լու համար են, իսկ մի քանիսն էլ, ո-րոնք գտնվում են հրապարակներում ու հասա-րակական պարտէզներում դարձաբանքի ու օրը դովացնելու համար են և արձանների ձեռն: Պարսիկում աւետարական կոչվող շատրուաններ (fontaines marchandes) էլ կան, որոնցից որոշեալ վճարով յօգուտ քաղաքի ջուր են վերցնում ջրե-րիցները, որոնք ջուրը ձեռակիր կամ ձիակիր տակաւներով տանում են իրանց մուշտարիների տները: Բայց պէտք է ասել, որ ջուր մատակա-րարելու այդ ձեռ շատ արագ կերպով ոչնչանում է այնպէս, ինչպէս ոչնչացել է հին ժամանակվայ ջրկիրների արուեստը, որոնք ունենալով զցած փոխի երկու ծայրիցը վերջոսներ կախ տուած ջուր էին տանում տները: Թէ որքան աննշան բան է այժմ ջրկիրութիւնը կարելի է իմանալ նրանից, որ 1874 թւին աւետարական շատրուան-ներից ստացած եկամուտն ընդամենը 188/350 Ֆրանկ էր, մինչդեռ 1861 թւին այդ եկամուտը 702,907 Ֆրանկ է եղել: Եւ այդ շատ հակասա-լի է, որովհետեւ քաղաքն իր ջրանցքների բաժա-նորդներին ջուր է մատակարարում 1000 լիտրը ոչ թանկ քան 33 սանտիմով, մինչդեռ ջրկիրնե-րը նոյն քանակութեան ջրի համար առնում են 5 Ֆրանկ. իսկ քաղաքին իրան ջուրը դրանից էլ էժան է նստում: Վերջապէս, փողոցները կուսա-նալու (լսեցեք, թիֆլիսիցը, լուսանալու) ու ջրը-

ջրեւելու համար փողոցներում ամեն քաղաքի-սում կան կրաններ, որոնք ինքնաբերաբար (ա-ստօմատ) են գործում:

«Այժմ Պարսիկ միակ քաղաքն է աշխարհիս և բնին, որտեղ ընդունված է ջրանցքների կրի-կի գծի սխեման (double canalisation): Այդ ջը-րանցքների մի մասը քաղաքային ընդհանուր պէտքերի համար է, իսկ միւսն մասը — մասնաւոր պէտքերի համար: Քաղաքն իր տնօրինութեան տակ ունի այժմ, երբ ջրանցքների նոր ծրագ-րված ցանցը դեռ բոլորովին պատրաստ չէ... ջր-այնքան մեծ պաշար, որ ամեն օր պարկեց կարողանում են գործ ածել 390-ից մինչև 40 հազար խորանարդ մէտր ջուր: Իսկ երբ որ ջրանցքները չլինեն վերջացնեն, այն ժամանակ 20 մէտրից ոչ պակաս լայնութիւն ունեցող բոլոր փողոցներում կարող են օգտվել ծրագրված ցան-ցի այն մասից, որ մասնաւոր գործածութեան համար պէտք է ջուր մատակարարէ, իսկ Պա-րսիկի ջրանցքներով քաղաքը հնուց ջրի առ-նակութիւնը կը հասնի օրէնքը 450 միլիոն լիտր կամ մօտաւորապէս 36 1/2 միլիոն վեղոցի, որ կը նշանակի թէ միջին թւում ամեն մի բնակիչի կը լի 15 վեղոց ջուր...»

«Որովհետ համար, թէ որքան շատ է Պարսիկ ջրանցքների մատակարարած ջուրը, բաւական է ասել, որ, օրինակի համար, Մօսկվայում իւրա-քանիւր բնակիչ վրա այժմ, ինչպէս յայտնի է, ընկնում է օրէնք մի վեղոցից պակաս ջուր, բայց մօտիկ ապագայում էլ, երբ որ նոր ջրանցքի շինութիւնն էլ բարեկարգող կերպով վերջանայ, Մօսկվայի բնակիչները հաղիւ թէ միջին թւով իւրաքանչիւրը 2 1/2 վեղոցից աւելի տանան»:

Է՛հ, մենք էլ միմիկարել ենք նրանով, որ մօսկ-վայցիք էլ մեզ նման իրանց ծարաւ քաղաքային ձայնաւորների ճարտարախօսութեամբ են յա-դեցնում և էլ չը խօսենք ջրի մասին: Պարսիկի քաղաքային բարեկարգութեան ուրիշ կողմերի մասին մի քան անգամ: Ս. Թ.

1887 թվին Գրոմոնդ-Վոլֆի ձեռքով առաջարկված դաշնագրերը: Բացի սրանից անդիլական պարլամենտի արձակուրդների ժամանակ վերադառնալով ինքից չէ կարող նորից յարուցված լինել: Երկրորդը, վերին աստիճանի բարձր է. արդարադատությունը և ոստիկանությունը բարեկարգված են, երկրորդ կանոնադր կերպով ուղղվելու աշխատանքները շարունակվում են, և չը կայ մի որ և է անսպասու հանգամանք երկրի ոչ քաղաքական, ոչ ֆինանսական, ոչ էլ դատաստանական ու զինուորական վիճակի մեջ, որը կարող լինի արդարացի աշխատանքի մի անմիջական միջամտություն թվի Անդրլայի և թվ իրան սուլթանի կողմից: Հաճախակի էլ չէ որ անգլիական թագուհու առաջին միջնորդը համաձայնվել և գիտական հարցի մասին բանակցություններ սկսել նոյն իսկ պարլամենտական արձակուրդներից յետոյ:

Ինչ էլ կամենում մեղանից սուլթանը, շարունակում է թերթը. յետ կանչել մեր զորքերը Երևանից, կամ նշանակել պայմանաժամ թվ երկու թղթերով մեր զորքերը վերադառնալու երկրորդը: Մենք ոչ առաջինի, ոչ էլ երկրորդի մասին մի որոշում ասել չենք կարող: Եթե սուլթանը արդարադատ է եղել պատեր վիճակի իր առանձին ուղարկված և եղել պատեր վիճակի իր առանձին իր միև երկրորդի վիճակի բարեփոխան հարցով: Մենք պատասխանատու չենք լինում պատահած լուրջությունների համար, սակայն, արդար լինելու համար, սուլթանը պետք է մեզ խնդրեր նոյնն անել իր միև երկրորդի վերաբերմամբ, այդ երկրորդ լուրջությունից և բարձրությունից ապահովված լինելով:

Կատարանը երկրորդում կանոնադր կերպով կազմակերպվեց, սուլթանի առաջադրված իրաւունքները վերաճեց, և նա մեզ է պարտավոր, որ այդ իր իրաւունքը նա չէ կորցրել: Ուրեմն ինչ բանից է դանդաղում նա: Մենք պաշտպանվեցինք երկրորդում Սուլթանի արձակուրդի արձակուրդի դեմ: Ուրեմն թող սուլթանը ակնհայտ չը զեն ան պետությունների խօսքերին, որոնք վերջ ի վերջոյ ցանկանում են թերթաց պետությունների կործանումը:

ՆԱՍՏԱԿ ԵՎ ԵԶՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժննդի 28 օգոստոսի վեց հարյուր տարիներ են անցել այն օրից, երբ Ալեքսանդր Նաւոյի վրա կատարվեց մի խորհրդալուր դաշնակցություն, որը ծնունդ պիտի տար այժման չվեյցարական հանրապետության 1291 թվ օգոստոսի ամսում, Ուրի լճի ափին, Գրիտլի գետի վրա հաւաքված են Ուրի, Շվեյց և Ունտեր-Վալդեն անտառապետական կանտոնների ներկայացուցիչները և սրբերի վրա երգվում են, որ միմյանց արևան վերջին կաթիլը կուեն հայրենիքի թնամիներին դեմ, և երբեք զենք վայր չը զեն միև իրանց սարերից չը հեռանայ առաքելական միև իրանց գրեթե: Երկրորդ տարիներ անդադար պատերազմներից յետոյ, լեռնակամների անդադար լուրջ յաղթել առաքելականներին և կազմել չվեյցարական դաշնակցությունը, որը սկզբներում բաղկացած էր միայն վերադառնալու երեք կանտոններից, միև 19 կանտոնները յետոյ են միանում առաջիններին հետ:

Այս տարի, օգոստոսի 2-ին ամբողջ Շվեյցարիան տոնում էր իր անկախության վեցհարյուրամյակը: Երախտագետ որդեքը չեն մոռացել իրանց հերոս-պապերի զորքերը. ամեն մի քաղաքացի իմանում է նրանց սխրագործությունները և աշխատում է, որքան կարելի է, վառ պահել նրանց յիշատակը երկրի, առաւել ևս մատաղ սերունդի սրտի մեջ: Նրանք մտաբերում են Գրիտլի-Վալդեն երգիչներին: Հաստատվելով, Արնոլդին և Ֆրիտտին:—Ահա սրանք ուղբեր են եղել:

Հաստատվելով Շվեյց կանտոնի հարուստ գիւղացի էր: Նա չինել էր սուղ մի քաղաքից գեղեցիկ տուն, որը խիստ զանազանվում էր միև գիւղացիների աղքատ խրճիթներից: Մի անգամ կանտոնի կառավարիչ առաքելական Գեյսլեր տեսնելով այդ տունը, հաճախում է նրան և վճարում է իրան սեփականացնել: Խեղճ Հաստատվելով մոտոդոլություն մեջ է ընկնում և չէ իմանում ինչ անել: Նրա կին Մարգարիտը աշխատում է իրաւունքի և մի և նոյն ժամանակ յանդիմանել իր ամուսնուն. «Չէ որ դուք աղամարդիք էք, ա-

սում է աղատաբեր կինը, թափ տուէք այդ անտանելի լուծը, որն անարդար կերպով մեր վզին են դրել: Գու ունես խելոք և քաջ բարեկամներ Ուրիում և Ունտերվալդենում. նրանք մեղանից պակաս չեն չարչարվում բռնակալի ձեռքում: Գնա նրանց մոտ և միասին խորհուրդ առնէք այն միջոցների մասին, որոնցով կարելի է լինի փշրել մեր ամօթաքեր շղթաները: Չը պէտք է երբեք ոչ յուսահատվել և ոչ տարակուսել. Երկնայինը միշտ պաշտպան է արդար քաջերին»: Հաստատվելով, լսելով իր կնոջ խելացի խրատները, այցելում է իր բարեկամ Ֆրիտտին, որ նրա հետ միասին խորհրդակցեն երկրի դրուժեհան մասին: Իր բարեկամի մոտ նա պատահում է և իրաւասարդ Արնոլդին, որը փախել էր Լանդեն-բերգ բռնակալի վրէժնից: Ունտերվալդեն կանտոնի կառավարիչ խոտաբարոյ Լանդենբերգն ուղում էր հարստանալ գիւղացիների քրախը-աշխատանքով, և դրա համար ամեն մի չնչին սխալ գործի համար տուգանք էր վերցնում իր հպատակներից:

Այդ կանտոնում ապրում էր ժողովրդից յարգված մի պատկառելի ծերունի, որի Արնոլդ որդին մեծում է իշխանի պահանջած տուգանքը վճարելու: Լանդենբերգն ուղարկում է իր մարդկանց Արնոլդի մոտ՝ սրա եղբերը խելու համար: Իշխանի ծառաները պատահում են Արնոլդին և նրա հօգն աշխատակի իրանց դաշտում: Նրանք կանգնեցնում են գուլմանը և յետ են լծում առանցքները և եղբերին: Մի ծառայ, ծաղրելով դիւղացիներին, ասում է. «Եթե դիւղացիներն ուղում են հաց ուտել, նրանք իրանք պէտք է քանչև գուլմանը: Այս խօսքերը համբերությունից հանում են երկրապետը Արնոլդին և նա փայտի մի ափսոսի սաստիկ հարուած է տալիս ծառային, որ սրա մասները փշրվում են: Թեպէտ ընդդիմադրելով նա պաշտպանում էր իր սեփականությունը, բայց Արնոլդ լաւ էր հասկանում, որ իշխանի ձեռքն ընկնելով, նա իր կենսաբան պիտի դրվի: Նա անցնում է սարերը, և թաղվում է Ուրի կանտոնի մեջ: Իշխանը նրան երկար որոնում է, բայց չէ կարողանում ձեռք բերել: Արնոլդի փոխարէն բանտարկում են նրա հօրը: Վերջինս իրողութիւն է աշխատում ապացուցանելու, որ իր որդու տեղը յայտնի չէ իրան, նա միայն գրգռում է բռնակալի բարկությունը: Լանդենբերգ հրամայում է հանել ծերունու աչքերը:

Շվեյցարական հերոսների մեջ ամենազնայնը տեղը բռնում է Վիլհելմ Տէլը, որին, չնորհիւ Շվեյցի գրչի և Բոստինի կրթաշատիճան, հասնում են ամենուրեք: Տէլը, ինչպէս յայտնի է, սպանում է երկրի աւտորիացի կառավարիչ Գեյսլերին: Յիշելով Գեյսլերի անուշուր, չեմ կարող առաջ չը բերել մի ծիծաղաբեր պատմություն: Գերմանական ծագում ունեցող իշխաններից մեկը, —այն իշխաններից, որոնք ականջներ սրած, աչքեր չուած միշտ սպասում են, որ մի որ և է փոքրիկ աղջուկին աղատություն ձեռք բերի, որ դնան նրա գլխին իշխան—կառավարչ կանդնելու,—ահա դրանցից մեկը՝ կոմս Գեյսլեր 1819 թվականին դիմում է Յիւրիին կառավարչության, պահանջելով սրանից տարեկան 2000 տալէր իբրև վարձատրություն իր նախնայի շէքման Գեյսլերի մահվան: Ի հարկէ, Յիւրիին մերժում է ձեռնակել իշխանին, պահանջելով որ վերջինս ապացուցանի, նախ՝ սպանված Գեյսլերի իր ժառանգ լինելը և վերջապէս՝ իսկ է որ Վիլհելմ Տէլը սպանել է Գեյսլերին:

Այժմ, մինչև անգամ, մի քանի չվեյցարացի նորագոյն պատմաբաններ կարծում են, թէ Վիլհելմ Տէլն առաջապետական անձնաւորություն է, որովհետև ոչ մի տեղ նրա անունը գրաւոր չէ յիշատակված, մինչդեռ միև մարդկանց անունները և գործերը պատահում են ձեռագրերի մեջ: Պատմաբանների կարծիքով չվեյցարացիք վերջերս են Տէլի վերաբերյալ աւանդությունը սկանդինավեան «սագ»-երից (ժողովրդական աւանդություններից) կամ թէ, ասում են նրանք, Տէլը մարմնացնում է իր մեջ այն բոլոր պատերազմները, որոնց մեղ է Ալպեան ժողովուրդը իր թշնամիների դէմ:

Այսպէս թէ այնպէս, Շվեյցարիայի աղատությունը ձեռք է բերված իր քաջասիրտ որդիկների արիւնով: Եւ այդ աղատությունը լաւ ապահովված է չնորհիւ այն պատերազմական կաղմակերպություն, որը բացի Շվեյցարիայից ոչ մի տեղ չը կայ:

Թեպէտ 1815 թ. Վիեննայի կոնգրեսում եւրո-

պական տէրութիւնները ընդունում են Շվեյցարիայի պատերազմական չեղարկումը, բայց վերջինս ստիպված է ունենալ ուժեղ զօրք, որովհետև չորս կողմից չըբազաւանված լինելով մեծ տէրութիւններով, պատերազմի ժամանակ նրա աղատությունը կարող է վտանգի ենթարկվել:

Շվեյցարիան չունի մշտական զօրք. երբ մտնում է մարդ չվեյցարական մի որ և է քաղաք, նա նկատում է, որ մի ինչ-որ բան է պակաս ժողովրդի մեջ. այստեղ չես հանդիպում զինուորներին, մինչդեռ Ֆրանսիայում ամեն մի քաղաքում աչքիդ է ընկնում կամ զինուորի կարմիր վարտիքը կամ քահանայի ածիլած երեսը:

Չինուորական ծառայությունը պարտաւորեցուցիչ է ամեն մի չվեյցարական քաղաքացու համար, ինչի նա հարուստ թէ աղքատ, ուսեալ թէ անգիտ: Վիճակ հանելը դոյութիւն չունի այստեղ, այլ ամեն երիտասարդ երբ 21-ը տարին է մշտնում, ստիպված է ծառայել:—Մի անգամ ես ներկայ էի, ինչպէս տեղիս համալսարանի մի պրոֆէսոր (ֆիզիկայի) իբրև հասարակ զինուոր հրացանը ձեռքին քայլում էր միև զինուորների շարքում, որոնց հրամանատարն էր մի սպայ, որը հենց նոյն պրոֆէսորի աշակերտն էր, մի քանի օր առաջ ուսանող—սպայ լսում էր պրոֆէսորի ֆիզիկայի դասախօսությունները, իսկ այժմ դերերը փոխվել են՝ պրոֆէսորն է լսում ուսանողին, որն առաջից զինուորական ուսումնարանում սպայի աստիճան էր ստացել:

Նորբնութիւն զինուորը ծառայում է առաջին տարին միայն 50 օր, իսկ միև տարիները, մինչև 45 տարեկան հասակը, 18 օր երկու տարին մի անգամ: Այդ կարծ ժամանակամիջոցում զինուորն ի հարկէ, չէ կարող սովորել զինուորական ամբողջ արհեստը, այլ միայն կարող է ծանօթանալ զինուոր և կարեւոր գիտությունների հետ: Մասամբ նա պատրաստ է մտել ծառայության մեջ, որովհետև ուսումնարանում նրան ընտելացրել են պատերազմական մարմնամարզությանը և հրացանաձգությանը: Ծառայությունից դուրս գալուց յետոյ ամեն մի զինուոր իր մօտ պահում է իր հրացանը և զինուորական շորերը: Ամեն մի քաղաքացի անգամ է մի որ և է մարմնամարզաւորական կամ հրացանաձգական ընկերության և նա ամբողջ կենսան իր հաշուով սովորում է պատերազմական արհեստը: Կառավարությունը միշտ խրախուսում է այդ, կազմելով ամեն տարի ժամանակաւորական կամ հրացանաձգական տոներ, ուր աջողակ մրցողները մեծաքանակ պարգևներ են ստանում:

Այս ամառ մարմնամարզական տօնի հերթը ժննդիւն էր: Միտղջ Շվեյցարիայից հաւաքվել էին քաղաքացի 4000-ից աւել մարմնամարզիկներ, որոնք երեք օրվայ ընթացքում ցուց էին տալիս իրանց ոյժը և ճարտիկությունը: Այդ տօնն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ պատերազմական մի ընկերութիւն, որի ժամանակ հմուտ ընտելները թանաշաններ էին նշանակում մրցողներին՝ պարզեա տալու համար:

Շնորհիւ այդպիսի կարգ ու կանոնների, Շվեյցարիան համեմատաբար աւելի շատ զինուոր ունի և աւելի քիչ դրամ է միսում նրանց վրա, քան մի որ և է տէրութիւն: Համեմատաբար սրան Բելգիայի հետ, որը նոյնպէս մի չեղօք տէրութիւն է, բայց որը մշտական զօրք է պահում: Շվեյցարիան ունենալով մօտաւորապէս 3 միլիոն ժողովուրդ, կարող է կուլի դաշտը դուրս բերել 200,000 զինուոր և ծախսում է նրանց վրա տարեկան 17 միլիոն ֆրանկ, մինչդեռ Բելգիան ունենալով երկու անգամ աւելի բնակիչ, քան Շվեյցարիային է, կարողանում է պահել միայն 50,000 զինուոր (մշտական) և որոնց վրա ծախսում է 47 միլիոն ֆրանկ:

Շվեյցարիայի պատերազմական նախարարը ստանում է մի խոշոր գումար, այն է 10,000 ֆրանկ. բացի սրանից խաղաղ ժամանակը երկրում չը կան զինուորական ուրիշ բարձր աստիճանաւորներ, օրինակ զինեւրաշներ, որոնց նշանակում են միայն պատերազմի ժամանակ:

Հետաքրքիր է և լեզուի հարցը զօրքի մեջ: Ինչպէս յայտնի է Շվեյցարիայում կան երեք լեզու՝ գերմաներէն, ֆրանսերէն և իտալերէն: Այդ քաղաքակրթութիւնը ոչ մի դժուարութիւն չէ պատճառում: Ամեն մի կանտոնի մեջ հաւաքված զինուորները մնում են հենց իրանց կանտոնում և նրանց վրա սպայներ նշանակում են մի և նոյն աղջուկներից, որին պատկանում են զինուորներ:

Ըր. բացի դրանից ամեն մի սպայ անպատճառ պիտի երկու լեզու իմանայ:

Շնորհիւ պատերազմական այդպիսի խելացի կազմակերպութեան, փոքրիկ Շվեյցարիան կարողացել է պահպանել իր աղատությունը, և այժմ նա հպարտութեամբ տօնում է իր անկախությունը 600 ամեակը:

Ք.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից լրագրիներին հեռագրում են, որ թերթաց միւնիստրութիւնների փոփոխութեան պատճառը սուլթանի ցանկութիւնն էր արմատախիւ անել առաջակութիւնը թերթաց հոգի վրա. բացի դրանից սուլթանը դժգոհ էր ֆիւմիլ-փաշայի թուլութիւնից եղիպտական հարցում: Ասում են, որ Անգլիան ևս դժգոհ էր ֆիւմիլ-փաշայից, որը երեքպետեան դաշնակցութեան կողմնակից էր համարվում:

—Լրագրիներին հաղորդում են, որ Շվարցենաում խորհրդակցում են միմեանց մեջ կոմս Կաշնովի, զինեւրալ Կապրիլի և Վիեննայի դերմանական ղեկավար պրինց Ռէյս:

—Բելգրադից հեռագրում են, որ Ստամբուլի կուսակիցները սաստիկ անհանգիստ են եղած միւնիստրական փոփոխութեան պատճառով Կ. Պօլսում:

—«Berliner Tageblatt» լրագրին Կ. Պօլսից գրում են հետեւեալը. «Որպէս յայտնի է ընթերցողներին, նորերս Եմբուում ապստաղութիւն էր ծագել, որը մեծ դժուարութեամբ ճնշել կարողացաւ թերթաց կառավարութիւնը: Այժմ Դեյսի-մում, Եփրատի ակունքներում գտնվող ընդարձակ և վայրենի լեռնային երկրում, որը կազմում է Մամիլի-Եմբու-Ալիս նահանգը, նոյնպէս ապստամբութիւն սկսվեց: Այդ նահանգում ընակվում են քիւրդ ցեղեր, որոնք, Եմբու ընդունելի նման, մինչև այժմ դեռ վերջնականապէս չէին նուաճված թերթերից: Կարելի էր, որոնք իրանց դերեբեյները հրամանատարութեան տակ են գտնվում, պարագում են անանապահութեամբ, առաջակութեամբ և փոխադարձ կողպստմամբ, որը մշտական երկպառակութեան և կուլի առիթ է տալիս: Հենց որ կառավարութիւնը փորձ է փորձում միջամտել նրանց գործերում, նրանք բոլորը միասին սկսում են կռաւարկութեան դէմ գործել: Նրանք մի անսցուած ունեն, որ ասում է, «չենք միմեանց մեջ կուլում են, բայց գալի վրա միասին են յարձակվում»: Դեյսիի քիւրդերը մահմետականներ չեն, այլ դաւանում են մի առանձին, օտարոտի կօմս, որի եւութիւնը նրանք դադարի են պահում, և այդ է պատճառը, որ այդ կրօնը մինչև այսօր անյայտ է մնացել: Այս անգամ այդ քիւրդ ցեղերի մեջ երկպառակութիւն և կուլի սկսվեց: Կառավարութիւնը զօրք ուղարկեց կարգը վերականգնելու համար, ի հարկէ այդ ժամանակ ընդհարում տեղի ունեցաւ: Մամիլի-Եմբու-Ալիս գաւառի պաշտօնական լրագրի խօսքերով, առաջին ընդհարման ժամանակ քիւրդերից մեջ հոգի սպանվեցան և տաւան ու հինգ հոգի վիրաւորվեցան, իսկ թերթերի կողմից եւրեք սպանվեցան և «մի քանիսը» վիրաւորվեցան, որոնց թւում է զօրքի հրամանատարը, զենդապետ Մէհմէդ-Ալի-բէյն, և զինուորական բժիշկ Կիւրդի Էֆենդի:

—Կ. Պօլսից հեռագրում են, թէ նոր մեծ-վիլի Զէֆադ-փաշան յայտնի է, որ սուլթանը դիտաւորութիւն ունի խիստ չեղօք դիրք բռնել և անկախ քաղաքականութեան հետեւել:

—Լուր է տարածվել, որ Կ. Պօլսի անգլիական ղեկավար Ուայտ պէտք է թողնի ղեկավարի պաշտօնը և յետ կանչվի Անգլիա:

—Օսմանեան կայսրութեան միւնիստրութեան փոփոխութեան առիթով սուլթանի հրատարակած իրաւիւրում ասված է միայն, որ միւնիստրութեան փոփոխութեան անհրաժեշտ է դատված: Բայց միւնիստրութեան փոփոխութեան պատճառները և նպատակը յայտնի չեն: «Nat. Zeitung» լրագրին ասում է, որ միւնիստրական այդ վերջին ճգնաժամը քաղաքական նշանակութիւն չունի, և կապ ունի պալատական խնդիրների հետ. նշանաւոր է միայն Օսման-փաշային զինուորական միւնիստրի պաշտօնից հրաժարեցնելը:

